



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

10 ապրիլի 2012թ. թիվ 138

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԲԼԱԳՈՂԱՐՆՈՅԵ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2012թ. հունվարի 30-ի «Վարչական հսկողության 2012 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» թիվ 11-Ա հրամանը՝

Կ ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ եմ.

2012թ. Լոռու մարզի համայնքներում վարչական հսկողություն իրականացնող հանձնաժողովին (հանձնաժողովի կազմը կցվում է)՝

1. ՀՀ Լոռու մարզի Բլագոդարնոյե համայնքում ս/թ ապրիլի 12-ից 14-ը ներառյալ իրականացնել վարչական հսկողություն:

2. Վարչական հսկողությունն իրականացնել համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից 2009-2011թթ. ընթացքում իրականացված լիազորությունների նկատմամբ:

3. Ստուգումն իրականացնել ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2012թ. հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության և կադրային գործի վարման մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 02-Ն հրամանով հաստատված մեթոդական ուղեցույցի համաձայն:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱՆ

A. Քեմալ

Ա.ԴԱՐԲԻՆՅԱՆ

2012թ. ապրիլի 10
ք.Վանաձոր